ՎՐԱՍՏԱՆ

ՄԵԿ ՏԱՆԸ

«ՎՐԱՍՏԱՆՈ» (ՆԱԽԱՐՈՒՅԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 39 - 40 (16842) ՇԱԲԱԹ 16 ՄԱՅԻՍԻ 2020Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

COVID - 19. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՄԱՅԻՍԻ 22-ԻՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՑՎԵԼՈՒ Է

Մայիսի 15-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի նախագահությամբ անցկացվեց կորոնավիրուսի դեմ պայքարի միջգերատեսչական համակարգող խորհրդի հերթական նիստը:

Կառավարության հակաճգնաժամային ծրագրի կրթական ոլորտի բաղադրիչի հարցի քննարկմանը նվիրված նիստի մեկնարկին, Վրաստանի կառավարության ղեկավարը հայտարարեց, որ մայիսի 22-ին երկրում արտակարգ դրությունը վերացվելու է:

Գիորգի Գախարիայի խոսքով, արտակարգ դրության երկարաձգման խնդրանքով կառավարությունը նախագահին չի դիմելու:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

200-ԱԿԱՆ ԼԱՐԻ ՖԵՐՄԵՐՆԵՐԻՆ՝ ԳՐԱՆՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՈՒՐ ՀԵԿՏԱՐԻ ԴԻՄԱՑ

ԱՆՑԿԱՑՎԵՑ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

Մայիսի 12-ին հանրությանը ներկայացվեց համավարակի պայմաններում գյուղատնտեսության հակաճգնաժամային ծրագիրը:

Ինչպես հայտարարեց Վրաստանի վարչապետը, նույնիսկ ներկայիս՝ նոր կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակում, գյուղատնտեսական գործընթացը չպետք է դադարի նույնիսկ մեկ օրով, երկրում չպետք է մնան անմշակ հողեր, եւ դրա համար կառավարությունը հակաճգնաժամային ծրագրով նախատեսում է գյուղատնտեսության ոլորտին, առանձին ֆերմերներին կոնկրետ աջակցության ցուցաբերման միջոցառումներ: Նրա խոսքով, ճգնաժամի շրջանում պետության համար հատկապես մեծ նշանակություն ունի պարենային անվտանգությունն ու ներքին արտադրանքի հարցը: Ըստ վարչապետի, խնդիրն արտացոլվել է ինչպես գնածի, այնպես էլ՝ երկրում մթերքի մատակարարման տեսանկյունից:

Հակաճգնաժամային ծրագիրը ենթադրում է ինչ-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ ՈՒ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՏՎԵՑ ՏԱՐԻՆ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՄԲ ՓԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՋՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ ՈՒ ԿՈՒՐՍ ՓՈԽԱԴՐՎԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Մայիսի 15-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան հանրությանը ներկայացրեց կրթության ոլորտում հակաճգնաժամային ծրագիրը: Ծրագրի մանրամասների մասին շնորհանդեսին խոսեց երկրի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Միխեիլ Չխենկելին:

Ծրագրի շնորհանդեսին խոսվեց կորոնավիրուսի դեմ պայքարում հանրակրթական, բարձրագույն եւ մասնագիտական կրթության ոլորտներում իրականացված նախագծերի, առկա մարտահրավերների եւ դրանց կարգավորման կոնկրետ ուղիների մասին:

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԱՐԻ ՉԻ ՀԱՅՏԱՐԱՐՎԻ

- Վրաստանում 2019-2020 ուսումնական տարին ակադեմիական չի հայտարարվի,- այս մասին հայտարարեց Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

«ՄԵՆՔ ՍՏԻՊՎԱԾ ԵՆՔ ՈՐՈՇ ԺԱՄԱՆԱԿ ԱՊՐԵԼ ԱՅՍ ՎԱՐԱԿԻ ՀԵՏ, ՊԵՏՔ Է ՍՈՎՈՐԵՆՔ, ԸՆՏԵԼԱՆԱՆՔ, ՀԱՂԹԱՀԱՐԵՆՔ...»

Մայիսի 11-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան Բաթումիում հանդիպում ունեցավ զբոսաշրջության ոլորտի եւ հյուրանոցային բիզնեսի ներկայացուցիչների հետ: Վարչապետը մասնակիորեն հանրագումարեց նոր կորոնավիրուսով պայմանավորված երկրում արտակարգ դրության եւ դրանով պայմանավորված սահմանափակումների հաստատման արդյունքները:

Ինչպես նշեց վարչապետը, ամենայն հավանականությամբ, որոշ ժամանակ ստիպված կլինենք ապրել կորոնավիրուսի հետ, եւ քաղաքացիները պետք է անցնեն ադապտացիա:

Միաժամանակ, Գիորգի Գախարիան ընդգծեց էկոնոմիկայի բացման նշանակությունը:

- Ինչպես երեւում է, մենք ստիպված ենք որոշ ժամանակ ապրել այս վարակի հետ, պետք է սովորենք, ընտելանանք, հաղթահարենք, կյանքը պետք է կանգ չառնի, էկոնոմիկան պետք է բացել:

Բոլորս պետք է սովորենք պաշտպանել անվտանգության այն տարրական նորմերը, որոնք հնարավորություն կտան երկիրը տնտեսապես զարգացնել, պահպանել աշխատատեղերը եւ ընդունել հյուրեր, զարգացնել զբոսաշրջությունը:

Իհարկե, հեշտ չի լինի ընտելանալ այս սոցիալական հեռավորությանը, բժշկական դիմակներին, բայց ստիպված ենք: Սա միակ հնարավորությունն է, որի

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՄԱՅԻՍԻ 9-Ը ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐՆ Է

«ԲՈԼՈՐՍ ՔԱՋ ԳԻՏԵՆՔ, ԹԵ ՎՐԱՍՏԱՆԸ ԻՆՉ ԱՎԱՆԴ Է ՈՒՆԵՑԵԼ ՖԱՇԻԶՄԻ ՁԱԽՁԱԽՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ»

Մայիսի 9-ին՝ Գերմանական ֆաշիզմի դեմ հաղթանակի 75-ամյակի օրը, Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, պաշտպանության նախարար Իրակլի Ղարիբաշվիլու ուղեկցությամբ, այցելեց Վակեի Հաղթանակի զբոսայգի եւ ծաղիկներ դրեց Անհայտ զինվորի գերեզմանին՝ հարգանքի տուրք մատուցելով ֆաշիզմի դեմ պայքարում զոհվածների հիշատակին:

- 75 տարի է ացել, երբ մեր փոքր ազգը 300 հազար զոհ տվեց այս հաղթանակի համար: Բոլորը քաջ գիտեն, թե Վրաստանը ինչ ավանդ ներդրեց այդ հաղթանակի մեջ,- հայտարարեց վարչապետը:

Նրա խոսքով, մենք միշտ պետք է հիշենք եւ ուրիշներին հիշեցնենք այդ մասին: Նախ, պետք է հարգանքի տուրք մատուցել նրանց հիշատակին, թեպետ այս պատմության մեջ ամենանշանակալին մեր տարեց վետերաններն են, ովքեր արդեն այն տարիքին են, երբ նրանց նկատմամբ հոգատարությունը պետք է դառնա մեր առօրյա պարտավորությունը:

Ուստի, առաջին հերթին, շնորհավորում եմ նրանց, պետությունը հոգում է նրանց նկատմամբ եւ այդպես կշարունակվի:

Վարչապետը հայտարարեց, որ կառավարության որոշմամբ, ֆաշիզմի դեմ հաղթանակի 75-ամյակի առթիվ, Երկրորդ աշխարհամարտի մասնակիցները, որպես սոցիալական օգնություն կստանան 600-ական լարի, իսկ Երկրորդ աշխարհամարտում զոհ-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՆՇՎԵՑ ՀԱՅՈՑ ԵՌԱՏՈՆԸ. ԾԱՂԻԿՆԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄ ԱՆՀԱՅՏ ՁԻՆՎՈՐԻ ԳԵՐԵԶՄԱՆԻՆ

Մայիսի 9-ին՝ Հայոց Եռատոնի օրը, Հայրենական մեծ պատերազմում հաղթանակի, Շուշիի ազատագրման եւ Արցախի պաշտպանության բանակի ստեղծման 28-րդ տարեդարձին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը տիկնոջ՝ Աննա Հակոբյանի հետ, Ստեփանակերտում մասնակցեց Հայոց Եռատոնին նվիրված միջոցառումներին:

Նա, Արցախի Հանրապետության գործող նախագահ Բակո Սահակյանի եւ նորընտիր նախագահ Արայիկ Հարությունյանի հետ, այցելեց Ստեփանակերտի հուշահամալիր, որտեղ ծաղկեպսակներ ու ծաղիկներ դրեց Հայրենական մեծ պատերազմում եւ Շուշիի ազատագրման մարտերում զոհված ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշարձանին:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

COVID - 19.

671 ՎԱՐԱԿՎԱԾ, 393 ԱՊԱՔԻՆՎԱԾ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Մայիսի 15-ի դրությամբ, Վրաստանի ողջ տարածքով անցկացվող լաբորատոր ստուգման արդյունքում, կորոնավիրուս է հաստատվել 671 մարդու մոտ, որից 393-ն արդեն ապաքինվել են:

Մայիսի 15-ին Վրաստանում հաստատվել է կորոնավիրուսի 15 նոր դեպք:

Հետեւաբար, այս պահի դրությամբ, Վրաստանում հաստատվել է կորոնավիրուսի 671 դեպք, այդ թվում՝ 393 ապաքինված, 12 մահվան ելքով:

Կարանտինի ռեժիմում է գտնվում 3 873, իսկ ստացիոնար բուժում է ստանում 404 մարդ:

Արտասահմանից բուժման նպատակով տեղափոխվել է Վրաստանի երեք քաղաքացի:

Կորոնավիրուսի 15 նոր դեպքը կապված է Բոլնիսիի մունիցիպալիտետի հետ: Ինչպես հայտնում են մունիցիպալիտետից, կորոնավիրուսի 86 փորձանմուշից 15-ը դրական է: Նշված անձինք Բոլնիսիի երկու գյուղի բնակիչներ են:

ԲՈԼՆԻՍԻԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏՈՒՄ ՄԱՅԻՍԻ 18-ԻՑ ՈՒԺԻ ՄԵՋ ԿՄՏՆԵՆ ԿԱՐԱՆՏԻՆԻ ՆՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Քանի որ մայիսի 18-ին Մառնեուլիում վերանում է խիստ կարանտինի ռեժիմը, կառավարությունը բանաձեւ է ընդունել Բոլնիսիի մունիցիպալիտետում ձեռնարկվելիք կարանտինային միջոցառումների վերաբերյալ, որն ուժի մեջ կմտնի մայիսի 18-ից:

Որոշման համաձայն, հասարակական անվտանգության ապահովման, բնակչության կյանքին եւ առողջությանը սպասվող վտանգի նվազեցման նպատակով, Բոլնիսիի մունիցիպալիտետի տարածքում արգելվում են տեղաշարժի բոլոր տեսակները, ինչը նշանակում է. արգելվում է մուտք գործել Բոլնիսիի մունիցիպալիտետի տարածք (այս սահմանափակումը չի վերաբերում Բոլնիսիի մունիցիպալիտետում գրանցված/փաստացի բնակվող անձանց), արգելում է դուրս գալ Բոլնիսիի մունիցիպալիտետի տարածքից, արգելվում է տեղաշարժվել Բոլնիսիի մունիցիպալիտետի տարածքում: Նշված սահմանափակումը չի վերաբերում բժշկական ծառայությունների մատուցման նպատակով եւ սնունդ ու դեղագործական ապրանքներ ձեռք բերելու նպատակով տեղաշարժին:

Բոլնիսիի մունիցիպալիտետի տարածքում արգելվում է հասարակական տրանսպորտով տեղաշարժը:

Որոշման համաձայն, առանձին բացառություններով կկասեցվի տնտեսական գործունեությունը, ցանկացած ապրանքների մատակարարումը/վաճառքը:

Որոշումն ուժի մեջ կմտնի 2020 թվականի մայիսի 18-ից:

ԷԴԳԱՐ ՄԱՔՄԱՆՅԱՆ
(մեր հատուկ թղթակից

COVID - 19. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԵԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՄԱՅԻՍԻ 22-ԻՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՑՎԵԼՈՒ Է

(Սկիզբը՝ 1-ին էջում)

- Վրաստանի կառավարությունը համավարակաբանական իրավիճակի խորը վերլուծությունից հետո, ընդունել է որոշում, որի համաձայն, մայիսի 22-ից հետո արտակարգ դրությունը երկարաձգելու խնդրանքով չի դիմելու երկրի նախագահին ու խորհրդարանին:

Արտակարգ դրությունը Վրաստանում հայտարարվել էր մարտի 21-ին, որից հետո մեկ անգամ երկարաձգվել է, եւ այսօր ընդունել ենք որոշում, որ արտակարգ դրության երկարաձգման խնդրանքով չենք դիմելու Վրաստանի խորհրդարանին, սակայն դա չի նշանակում, որ հաստատված սահմանափակումները վերացվում են ամբողջությամբ:

Այդ նպատակով, մենք դիմելու ենք խորհրդարանին, որպեսզի սկսվեն օրենսդրական փոփոխությունների վրա աշխատանքները, որոնք հնարավորություն կտան առանց արտակարգ դրություն հայտարարելու, կառավարել համավարակը,- ասաց Գիորգի Գախարիան:

«ՄԵՆՔ ՍՏԻՊՎԱԾ ԵՆՔ ՈՐՈՇ ԺԱՄԱՆԱԿ ԱՊՐԵԼ ԱՅՍ ՎԱՐԱԿԻ ՀԵՏ, ՊԵՏՔ Է ՍՈՎՈՐԵՆՔ, ԸՆՏԵԼԱՆԱՆՔ, ՀԱՂԹԱՀԱՐԵՆՔ...»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

պայմաններում կարող ենք Վրաստանը դարձնել առաջին երկիրը, որը կսկսի բացել զբոսաշրջությունը,- հայտարարեց Գիորգի Գախարիան:

Նրա խոսքով, երկրում ստեղծված իրավիճակը թույլ է տալիս որոշակի մեղմացնել, իսկ առանձին դեպքերում նույնիսկ լրիվությամբ վերացնել համավարակային սահմանափակումները: Մասնավորապես, մայիսի 14-ից Ռուսթավիում ու Գարդաբանիում վերականգնվել է երթեւեկությունը: Քաղաքներում վերացվել է ելքումուտքի վրա հաստատված արգելքը:

Բացի այդ, մայիսի 18-ից սահմանափակումները վերացվելու են նաեւ Մառնեուլիում, մայիսի 18-ից վերաբացվում են գեղեցկության սրահները եւ էսթետիկ կենտրոնները, մայիսի 18-ից կվերացվի 3-ից ավելի մարդկանց հավաքին վերաբերող արգելքը:

Հիշեցնենք, որ տեղաշարժման վրա սահմանափակումները Թբիլիսիում վերացվել էին մայիսի 11-ին, իսկ մայիսի 5-ին բացվել էին Քութայիսի ու Բաթումի քաղաքները:

Նոր կորոնավիրուսի կանխարգելման պատճառով, երկրում արտակարգ դրությունը գործելու է մինչեւ մայիսի 22-ը:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

ՄԵՐ ՀԱՐԳԱՐԺԱՆ ԿԱՐԻՆԵ, ՇՆՈՐՀԱՎՈՐ ԾՆՈՒՆԴ

Ծննդյան տոնի առիթով, սիրով ու ջերմորեն շնորհավորում ենք վիրահայ համայնքի թերեւս ամենահամեստ, թեեւ մեծավաստակ գործչին, հիանալի մարդուն, իր մեծ գերդաստանի արժանի դստերն ու երկու հայրենիքների զավակ, հմայիչ մեր Կարինե Մանուկյանին:

Ամենից առաջ Կարինեն նվիրյալ է, անդավաճան նվիրյալ ընտրած ուղղու՝ կրթությանը: Կարինե Մանուկյանի կենսագրությունը մեր նորանկախ Վրաստանի մանկավարժության պատմության յուրատեսակ վավերագիր է՝ լի արժանապատվորեն ու արդարացի վաստակած հարգանքի ու անսահման երախտագիտության էջերով: Թբիլիսյան բուհը հենց այդ մասնագիտությամբ ավարտելով՝ անխոնջ մանկավարժը հասել է տնօրենի պատասխանատու պաշտոնին, իսկ այսօր նա «մեր մարդն» է Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի նախարարությունում՝ հարգված ու օրինակելի: Նրա շնորհիվ ու միջոցով, Վրաստանի հայկական կրթօջախների կապը նախարարության հետ իր գործուն արդյունքն է ունենում՝ անհրաժեշտ լուծում տալով ծագող խնդիրներին: Իսկ ավելի հաճախ, Կարինեն Վրաստանի ու Հայաստանի կրթական ոլորտների կամուրջն է: Լինելով գնահատված, մանկավարժական ոլորտում ունեցած ներդրումի ու գրանցած հաջողությունների համար՝ նա քանիցս արժանացել է Վրաստանի եւ Հայաստանի կրթության, գիտության եւ մշակույթի նախարարությունների պատվոգրերի ու շնորհակալագրերի, պարգեւատրվել՝ հուշամեդալներով:

Բարի տարեդարձ, սիրելի Կարինե, երջանկառատ ու առողջ, բովանդակալից ու արգասաբեր, գործնական ու անձնական նվաճում-ձեռքբերումներով հարուստ ու երկար տարիների ընթացք ...

«ՎՐԱՍՏԱՆ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ



COVID-19.

ՉՈՐՍ ՈՒ ԿԵՍ ՄԻԼԻՈՆԻՑ ԱՎԵԼԻ ՎԱՐԱԿՎԱԾ, ՄԻԼԻՈՆ ՈՒ ԿԵՍԻՑ ԱՎԵԼԻ՝ ԱՊԱՔԻՆՎԱԾ

Աշխարհում նոր տիպի կորոնավիրուսային վարակով պայմանավորված COVID-19-ով վարակվածների թիվն անցել է 34 528 800-ը, մահացածների թիվը հասել է 303 442-ի: Ապաքինվել է 1 706 500 մարդ:

Վիրուսով վարակվածների թվով առաջին տեղում հայտնված ԱՄՆ-ում 1 457 593 հաստատված դեպք կա: Այստեղ մահացածների թիվը 86 912 է: Այս ցուցանիշով եւս ԱՄՆ-ն առաջինն է աշխարհում: Ընդհանուր ցուցանիշով, երկրորդ տեղում գտնվող Իսպանիայում հաստատված դեպքերի թիվը 272 646 է: Մահացության ցուցանիշը կազմում է 27 321: Ռուսաստանը հայտնվել է երրորդ տեղում: Այստեղ հաստատված դեպքերի ընդհանուր թիվը 252 245 է: Վարակից մահացել է 2 305 մարդ: Կորոնավիրուսից վարակվածության ցուցանիշով հաջորդը Մեծ Բրիտանիան է. եվրոպական այդ երկրում գրանցվել է 233 151 հաստատված դեպք, մահացել է 33 614 մարդ: Իտալիան վարակվածների թվով հինգերորդն է: Գրանցված է վարակվածության 223 096 դեպք, մահացել է 31 368 մարդ: Հաջորդ տեղում Բրազիլիան է՝ 203 165 դեպք, մահացած՝ 13 999: Նրանց հաջորդում է Ֆրանսիան, որտեղ կա 178 870 հաստատված դեպք: Վարակի հետեւանքով մահացել է 27 425 մարդ: Գերմանիայում 175 123 հաստատված դեպք կա, մահացել է 7 933 մարդ: Թուրքիայում վարակակիրների թիվը հասել է 144 749-ի, մահացածներինը՝ 4 007-ի: Իրանում 114 533 հաստատված դեպք կա, մահացել է 6 854 մարդ: Ինչ վերաբերում է համաճարակի սկիզբ հանդիսացող Չինաստանին, ապա հաստատվել է 82 933 հիվանդության դեպք, մահացածների թիվը կազմում է 4 633:

ԹՈՒՐՔԻԱ ԼԻՐԱՅԻ ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ԱՐԺԵԶՐԿՈՒՄԸ

Չնայած Թուրքիայի իշխանությունների՝ տնտեսական ներուժի հզորացմանն ուղղված քայլերին, ամերիկյան դոլարի հեմամատությամբ, թուրքական լիրան ռեկորդային արժեզրկում է ապրում: Թուրքական տարադրամը վերջին օրերին 0,7 տոկոսով արժեզրկվեց եւ դոլարի համեմատ կազմեց 7,2496, ինչը գերազանցում է 2018 թվականի տարադրամային ճգնաժամի ցուցանիշը: Ընդհանուր առմամբ, այս տարի թուրքական տարադրամը արժեզրկվել է 18 տոկոսով, ինչը բավականին բարձր ցուցանիշ է զարգացած շուկայական էկոնոմիկայով երկրի համար:

ԳԵՐՄԱՆԻԱ ՀԱՆՎՈՒՄ Է ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Գերմանիայի կառավարությունը որոշում է կայացրել փուլային տարբերակով հանել հարեւան երկրների հետ սահմանային վերահսկողությունը:

Սկսած մայիսի 16-ից նախատեսվում է աստիճանաբար հանել սահմանային վերահսկողությունը: Ընդ որում, Լյուքսեմբուրգի հետ սահմանն ամբողջությամբ կբացվի մայիսի 16-ին: Եթե իրավիճակը թույլ տա, ապա սահմանների ամբողջական բացումը նախատեսված է հունիսի 15-ին:

Հիշեցնենք, որ Գերմանիայում կորոնավիրուսով վարակվածների թիվը կազմում է 175 123, մահացածներինը՝ 7 933:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՄԱՅԻՍԻ 9-Ը ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐՆ Է

«ԲՈԼՈՐՍ ՔԱՋ ԳԻՏԵՆՔ, ԹԵ ՎՐԱՍՏԱՆԸ ԻՆՉ ԱՎԱՆԴ Է ՈՒՆԵՑԵԼ ՖԱՇԻԶՄԻ ԶԱԽՋԱԽՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

վածների ընտանիքների անդամները՝ 300-ական լարի:

Այդ օրը Թբիլիսիի Վակեի Հաղթանակի զբոսայգում Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, պաշտպանության եւ անվտանգության հարցերով նախագահի խորհրդական Գելա Գիորգաձեի ուղեկցությամբ, ծաղկեպսակ դրեց Անհայտ զինվորի շիրիմին եւ մեկ րոպե լռությամբ հարգանքի տուրք մատուցեց ֆաշիզմի դեմ պայքարում զոհվածների հիշատակին: Օրվա առիթով, նախագահը հայտարարություն տարածեց, որով վետերաններին շնորհավորեց Մեծ հաղթանակի առթիվ՝ առանձնակի ընդգծելով նրանց ավանդը միջազգային հանրության երկրների միջեւ հետպատերազմյան համագործակցության ձեւավորման գործում:

Ֆաշիզմի դեմ հաղթանակի 75-ամյակի առթիվ Հաղթանակի զբոսայգի այցելեցին եւ Անհայտ զինվորի շիրիմին ծաղիկներ խոնարհեցին նաեւ Վրաստանի խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվածեն, խորհրդարանի պատգամավորներ Գիորգի Վոլսկին, Իրակլի Սեսիաշվիլին, Կոբա Կոբալաձեն:

(Խորագրի շարունակությունը՝ 5-րդ էջում)



ՆԱԽԱԳԱՀԸ ՆԵՐՈՒՄ ՇՆՈՐՀԵՑ ԳԻԳԻ ՈՒԳՈՒԼԱՎԱՅԻՆ ԵՎ ԻՐԱԿԼԻ ՕՔՐՈՒԱՇՎԻԼՈՒՆ

Մայիսի 15-ին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, ելնելով երկրի նախագահի իրավասություններից, ներում շնորհեց ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչներ, Թբիլիսիի նախկին քաղաքապետ Գիգի Ուգուլավային եւ Վրաստանի պաշտպանության նախկին նախարար Իրակլի Օքրուաշվիլուն: Նախագահի հայտարարությամբ, երկրում քաղբանտարկյալներ չկան, թեպետ ինքը իր վրա է վերցնում քրեական օրենսգրքով նախատեսված գործողության համար պատիժը կրող քաղաքագետների ներման պատասխանատվությունը: Այդ քայլին նա դիմել է խորհրդարանական ընտրություններից առաջ երկրում քաղաքական իրավիճակի լարվածության թուլացման, միջազգային հանրության առջեւ երկրի հեղինակության պահպանման համար:

ԿԵՆՍԱԿԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԸ ՆՎԱԶԵԼ Է

Վրաստանի Ազգային վիճակագրության ծառայության տվյալներով, 2020 թվականի ապրիլին, մարտ ամսվա համեմատ, Վրաստանում կենսական նվազագույնը նվազել է: Այս տարվա մարտ ամսին աշխատունակ տղամարդու կենսապահովման մակարդակը կազմել է 206,1 լարի, իսկ ապրիլին այդ ցուցանիշը նվազել է մինչեւ 199,6 լարիի:

Մարտի համեմատ, ապրիլին 5,8 լարիով նվազել է միջին սպառողի կենսական նվազագույնը եւ կազմել՝ 176,8 լարի: 10 լարի եւ 90 թեթրիով նվազել է միջին ընտանիքի կենսապահովման մակարդակը, որը կազմել է 334,8 լարի:

Ինչ վերաբերում է մեկ շնչի կենսական նվազագույնին, ապա մարտի տվյալներով մեկ հոգի ունեցող ընտանիքին 176,8, երկու մարդուց բաղկացած ընտանիքին՝ 282,8, երեք հոգուց բաղկացածին՝ 318,2, չորս հոգուն՝ 353,6, հինգ հոգուն՝ 397,8, վեց եւ ավելի անդամ ունեցող ընտանիքների համար՝ 470.2 լարի:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ՀԱՎԱՏԱՐԻՄ Է ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄԱՐՏԻ 8-ԻՆ ՁԵՌՔ ԲԵՐԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ»

Կրկին առաջնային պլան մղվեց նոր կորոնավիրուսի տարածման կապակցությամբ երկրում ստեղծված իրավիճակի արդյունքում երկրորդային դիրքեր մղված, ընտրական օրենսգրքում սահմանադրական փոփոխությունների կատարման վերաբերյալ կառավարող եւ ընդդիմադիր թիմերի միջեւ բանակցային գործընթացը:

Ինչպես տեղեկացրել ենք, դեռեւս մարտի 8-ին օտարերկրյա դեսպանների մասնակցությամբ անցկացված հանդիպմանը, «Վրացական երազանքի» եւ միացյալ ընդդիմության ներկայացուցիչները հասան պայմանավորվածության, ըստ որի, 2020 թվականի խորհրդարանական ընտրությունների համար կգործարկվի 120 համամասնական եւ 30 մեծամասնական ընտրակարգերով օրենքը:

Թեպետ վերջին ժամանակներում ընդդիմության առանձին ներկայացուցիչների կողմից բարձրացվեց ընտրական օրենսգրքի հարցին զուգահեռ այսպես կոչված քաղաքական բանտարկյալների ազատման թեման: Միաժամանակ նշվում է, որ այդ երկու հարցերը միմյանց հետ կապակցված են եւ պետք է կարգավորվեն միաժամանակ:

- Այս համաձայնագրով, յուրաքանչյուր կողմ պարտականություն է ստանձնում, որ 2020 թվականի խորհրդարանական ընտրությունների համար ընդունենք նոր ընտրական համակարգ եւ խուսափենք արդարադատության ոչ պատշաճ քաղաքականացումից,- հայտարարեց Վրաստանի խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվածեն ի պատասխան ընդդիմության հայտարարությունների:

- Վրացական երազանքը» կատարում է մարտի 8-ի համաձայնագրով հաշվի առնված բոլոր պարտականությունները: Ցավոք, համաձայնագրի կնքման օրից ընդդիմությունը հզորացրել է ջանքերը արդարադատության ոչ պատշաճ քաղաքականացման ուղղությամբ,- նշեց Արչիլ Թալակվածեն:

COVID - 19

ՄԵԿ ՇԱԲԱԹՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ 2,217 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻԻ ՏՈՒԳԱՆՔ՝ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Արտակարգ դրության պայմանակարգի խախտումների համար, անցած մեկ շաբաթվա ընթացքում, ընդհանուր առմամբ, տուգանվել է 722 ֆիզիկական եւ մեկ իրավաբանական անձ: Դուրս գրված տուգանքի չափը կազմել է 2,217 միլիոն լարի: Այսպիսով, երկրում արտակարգ դրության հայտարարումից հետո, անցած 40 օրերի ընթացքում, կարգի խախտման համար դուրս գրված տուգանքի չափը հասել է գրեթե 23 միլիոն լարիի:

Մայիսի 8-15-ը իրավապահների կողմից վավերացվել է արտակարգ դրության 723 խախտում, դուրս է գրվել 2 217 000 լարիի տուգանք: Տուգանվածները 603 ֆիզիկական անձինք են (տուգանքի գումարը կազմել է 1 809 000 լարի): 273 հազար լարիի ընդհանուր գումարով տուգանվել են 79-ը հանրային վայրերում երեք մարդուց ավելի հավաքների ու 2 մետր սոցիալական հեռավորություն պահպանելու կարգի խախտման, եւս 3-ը՝ 9 հազար լարի գումարով տուգանվել է ինքնամեկուսացման կարգի խախտման համար:

Ուղեւոր տեղափոխելու ու մեքենայով տեղաշարժվելու կանոնների խախտման համար տուգանվել է 37 մարդ, գումարը կազմել է 111 հազար լարի:

Հիշեցնենք, որ արտակարգ դրության կարգը խախտելու համար ֆիզիկական անձի տուգանքը կազմում է 3 000, իսկ իրավաբական անձինը՝ 15 000 լարի:

ԱՄԻՐԱՆ ԳԱՄՂՐԵԼԻՁԵ. «ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ԿԱՐՈՂ Է ՎԵՐԱԴԱՌՆԱԼ, ՄԵՆՔ ՉՊԵՏՔ Է ԹՈՒԼԱՆԱՆՔ»

Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեի հայտարարությամբ, երկիրը ներքին տարածման 8-րդ շաբաթում է, եւ ամեն օր նվազում է նոր դեպքերի թիվը, Վրաստանում համավարակային վիճակն ունի հանդարտվելու միտում, սակայն մենք չպետք է թուլանանք:

- Մենք լրջորեն ավելացրել ենք թեստավորված անձանց թիվը: Վերջին մեկ շաբաթում «PCR» թեստ է անցել 1500 մարդ: Հետազոտվել են ինչպես վարակակիրների հետ շփում ունեցած, այնպես էլ՝ ռիսկային խմբերում ընդգրկված մարդիկ: Բուժանձնակազմը, տարբեր մասնագիտության ներկայացուցիչները, ծերանոցների բնակիչները եւ նրանց մասին հոգացող անձնակազմը: Նախարարի նոր հրամանով սահմանվել են ռիսկային խմբեր, որոնք պետք է առաջին հերթին թեստավորվեն, ուստի երկրում ավելի ու ավելի է ընդարձակվում «PCR» թեստավորման շրջանակը: Չնայած, բացահայտված վարակակիրների թիվը դեռեւս նվազում է, եւ կարող ենք ասել, որ համավարակային վիճակն ունի խաղաղվելու միտում, սակայն մենք չպետք է թուլանանք: Մենք չպետք է մտածենք, որ հաղթահարել ենք կորոնավիրուսը,- հայտարարեց Ամիրան Գամղրելիձեն:

Նրա խոսքով, մեծ հավանակությամբ, ամռանը պետք է լինի հանդարտ ժամանակաշրջան, սակայն դա եւս չի տալիս հանգստանալու հիմք:

Հարցին, պետք է շարունակվի՞, թե՞ ոչ արտակարգ դրությունը, Ամիրան Գամղրելիձեն նշեց, որ այս որոշումը կայացնում է երկրի գերագույն իշխանությունը:

- Ինչ վերաբերում է արտակարգ դրությանը, երկիրը շարժվում է այն ծրագրով, որը կառավարության կողմից ներկայացվել էր եւ բաղկացած էր 6 փուլից, սակայն համաճարակային վիճակը հիմք է տալիս, որպեսզի որոշ սահմանափակումներ չեղարկվեն առավել արագ: Ինչ վերաբերում է արտակարգ դրության չեղարկմանը, դա համակարգող խորհրդի, խորհրդարանի եւ նախագահի իրավասությունն է,- նշեց Ամիրան Գամղրելիձեն:

ԹԵՆԳԻԶ ՑԵՐՑՎԱՁԵ. «ԵԹԵ ՎԱՐԱԿԱԿԻՐՆԵՐԻ ԹՎԻ ԱՎԵԼԱՑՈՒՄ ՉԼԻՆԻ, ԱՊԱ ՄԱՅԻՍԻ 22-ԻՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԿԼԻՆԻ ՉԵՂԱՐԿԵԼ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ»

Ինչպես հայտարարեց Թբիլիսիի ինֆեկցիոն հիվանդանոցի տնօրեն Թենգիզ Ցերցվաձեն, արտակարգ դրության չեղարկման վերաբերյալ որոշում կկայացնեն սահմանափակումների մասամբ վերացման արդյունքների հիման վրա:



- Այսօրվա համաճարակաբանական իրավիճակը տալիս է այդ հնարավորությունը, սակայն մինչեւ մայիսի 22-ը մնացել է մեկ շաբաթից ավելի, եւ մինչ այդ կունենանք առաջին արդյունքները: Այն արդյունքները, որոնք մեզ կտա սահմանափակումների մասամբ վերացումը: Հույս ունեմ, որ մայիսի 11-ից սահմանափակումների մասամբ վերացումից հետո, չի լինի դեպքերի աճ: Ի նկատի չունեմ նոր դեպքերի միանիշ թիվ կամ անգամ մինչեւ 20 նոր դեպք, դա սովորական երեւույթ է, եւ երկար ժամանակ կլինի, ինչը երկրին ոչ մի բարդություն չի բերի: Ի նկատի ունեմ այն, որ այս ամենը եթե չհանգեցնի վարակի կտրուկ աճի, ապա մայիսի 22-ին հնարավորություն կտրվի չեղարկել արտակարգ դրությունը,- հայտարարեց Թենգիզ Ցերցվաձեն:

Ինֆեկցիոն կլինիկայի տնօրենը գտնում է, որ երկիրը կկարողանա պահպանել առկա իրավիճակը:

- Կարծում եմ, կկարողանանք պահպանել այս իրավիճակը: Իմ խորհուրդը կլինի այն, որ սահմանափակումների վերացումից հետո պահպանել երեք կետ՝ ձեռքերի հաճախակի լվացում, սոցիալական հեռավորություն եւ փակ տարածքում կրել դիմակ: Սա չի առաջացնի այնպիսի անհարմարություններ, որը կխախտի մեր կյանքի ռիթմը: Փոխարենը, այս ամենը կապահովի այն, որ հարկավոր չի լինի դիմել նորմաների խստացման, - ասաց Թենգիզ Ցերցվաձեն:

COVID - 19. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ ՈՒ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՏՎԵՑ ՏԱՐԻՆ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՄԲ ՓԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՋՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ ՈՒ ԿՈՒՐՍ ՓՈԽԱԴՐՎԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ինչպես նշեց վարչապետը, Վրաստանում ուսումնական տարին անցել է հեռավար, առցանց ռեժիմում:

- 12-րդ դասարանցիները ուսումնական տարին կավարտեն մայիսի 20-ին իսկ առաջին դասարանցիները՝ մայիսի 27-ին, մնացած դասարանները՝ հունիսի 15-ին: Բացի այդ, ցանկանում եմ ասել, որ ազգային քննությունները կանցկացվեն սովորական ռեժիմով, եւ նրանց օրերը հայտնի կդառնան առաջիկա օրերին,- ասաց Գիորգի Գախարիան:

ԸՆԴԳԾՎԵՑ «ՀԵՌՈՒՍՏԱԴՊՐՈՑ» ՆԱԽԱԳԾԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Կրթության նախարարը առանձնակի ընդգծեց Առաջին ալիքի հետ համագործակցությամբ «Հեռուստադպրոց նախագծի կարեւորությունը: Նրա խոսքով, ապրիլի 13-ից այդ նախագծի շրջանակներում ազգային փոքրամասնության, մասնավորապես՝ հայ աշակերտների համար մաթեմատիկայի, բնության, կենսաբանության, ինչպես նաեւ մայրենի լեզվի դասերը դասավանդվեցին մայրենի լեզվով:

«Հեռուստադպրոց» նախաձեռնությանը անդրադարձավ նաեւ Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան՝ հայտարարելով, որ «Հեռուստադպրոցը» հանրաճանաչ է դարձել ոչ միայն Վրաստանում, այլեւ ձեռք է բերել միջազգային ճանաչում:

- Չնայած, որ Վրաստանում կան մարդիկ, ում հասանելի չէ համացանցը, կրթության նախարարությունը լուծել է նաեւ այդ խնդիրը եւ Հանրային հեռարձակողի հետ ստեղծել այնպիսի ձեւաչափ, ինչպիսին է «Հեռուստադպրոցը», որը հանրաճանաչ է դարձել ոչ միայն Վրաստանում, այլեւ ձեռք է բերել միջազգային ճանաչում: Անչափ կարեւոր է այն փաստը, որ «Հեռուստադպրոցը» ձեւաչափ է, որը հեռարձակվում է նաեւ ազգային փոքրամասնությունների լեզուներով եւ յուրաքանչյուր աշակերտի տալիս ուսումնական տարին հաջողությամբ ավարտելու հնարավորություն: Այս քայլերի արդյունքն այն է, որ Վրաստանում 2019-2020 ուստարին ակադեմիական չի հայտարարվի,- ասաց վարչապետը:

Կրկնենք, որ Վրաստանում ուսումնական տարին անցկացվել է առցանց եւ 12-րդ դասարանցիներն ուսումնական տարին կավարտեն մայիսի 20-ին, իսկ առաջինդասարանցիները՝ մայիսի 27-ին, մնացածները՝ հունիսի 15-ին:

ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆ ԻՐԵՆ ԱՐԴԱՐԱՑՐԵՑ

Ծրագրի շնորհանդեսին իր խոսքում Միխեիլ Չխենկելին հայտարարեց, որ հանրակրթական ոլորտում ներդրված հեռավար ուսուցման արդյունքները թույլ են տալիս նշել, որ տարին ակադեմիական չի հայտարարվի:

- Դա մեր հանրակրթական ողջ ոլորտի մեծ ձեռքբերումն է: Խորին շնորհակալություն եմ ցանկանում հայտնել ուսուցիչներին եւ պրոֆեսորներին այս, իրոք, հերոսության համար, որն նրանք կատարեցին՝ մեր անվանի բժիշկների հետ միասին կանգնելով ռազմաճակատային առաջավոր գծում,- հայտարարեց նախարարը:

Նախարարի խոսքով, դպրոցներում հաջողությամբ տարվում է հեռավար ուսուցումը, որի արդյունքներից ելնելով՝ 2019-2020 ուսումնական տարվա գարնանային կիսամյակը ակադեմիական չի համարվի: Միխեիլ Չխենկելին նշեց, որ նախարարության կողմից իրականացվող հեռավար ուսուցման մեթոդը դրական գնահատականի է արժանացել միջազգային հանրության կողմից եւ էկոնոմիկայի զարգացման ու համագործակցության միջազգային կազմակերպության շրջանակային փաստաթղթում այն դասվել է հակաճգնաժամային լավագույն միջոցառումների շարքում:

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՉԱՓԸ ՉԻ ՓՈԽՎԻ, ՀՆԱՐԱՎՈՐ Է ՄԻԱՅՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ՀԵՏԱՁԳՈՒՄԸ

Հակաճգնաժամային կրթական ծրագրի շնորհանդեսին Միխեիլ Չխենկելին անդրադարձավ նաեւ միասնական ազգային քննությունների թեմային՝ նշելով, որ ամսաթիվը կհայտարարվի հունիսին, այդ ժամանակ համավարակով պայմանավորված կունենանք ավելի լավ պատկեր:

Բացի այդ, ինչպես նշել է նախարարը, հնարավոր է ամսաթիվը հետաձգվի մինչեւ օգոստոս:

- Միակ փոփոխությունները, որոնք կարող են տեղի ունենալ ազգային քննությունների հետ կապված, ամսաթվերն են: Հնարավոր է ամսաթվերը հետաձգվեն մինչեւ օգոստոս եւ դրա պատճառը համավարակաբանական իրավիճակն է:

Ինչ վերաբերում է ձեւաչափին, ապա այն կլինի անփոփոխ:

Համապատասխանաբար, այսօրվա դրությամբ, մենք շեշտը դնում ենք հունիսի վրա, ինչպես դա նախորդ տարիներում էր: Կոնկրետ ամսաթվերը կհայտարարվեն հենց հունիսին,- ասաց Միխեիլ Չխենկելին:

200-ԱԿԱՆ ԼԱՐԻ ՖԵՐՄԵՐՆԵՐԻՆ՝ ԳՐԱՆՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԵԿՏԱՐԻ ԴԻՄԱՑ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

պես օգնություն ֆերմերներին, այնպես էլ՝ գյուղատնտեսական մթերքի արտադրման արդյունավետությունը բարձրացնող հարցերի լուծում:

Գիորգի Գախարիայի խոսքով, ֆերմերները աջակցություն ստանալու նպատակով գյուղատնտեսության նախարարության բաժիններին կարող են դիմել մայիսի 20-ից: Օգնությունը կվերաբերի մոտ 200 000 ֆերմերի, ընդհանուր բյուջեն կկազմի 300 մլն լարի:

ԿԻՐԱԿԱՆԱՑՎԻ 200 ՀԱԶԱՐ ՖԵՐՄԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ 37 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻԻ ԱՐԺՈՂՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱԳԻԾ

Մայիսի 12-ի գյուղատնտեսության հակաճնաժամային ծրագրի շնորհանդեսին Վրաստանի բնապահպանության եւ գյուղատնտեսության նախարար Լեւան Դավիթաշվիլու փոխանցմամբ, սկսվում է «Գյուղատնտեսական նշանակության հողատերերի խթանումը» նախագիծը:

Ծրագիրը նկատի ունի գյուղատնտեսական ապրանքի եւ վարուցանքի ծառայության արժեքի սուբսիդավորում: Ծրագրով հաշվի առնված սուբսիդավորումն ստանալու համար անրաժեշտ է, որ ֆիզիկական եւ իրավաբանական անձինք ունենան հանրայի ռեեստրում գրանցված գյուղատնտեսական նշանակության հողամաս: Սուբսիդիայի ծավալը մեկ հեկտարի համար սահմանվել է 200 լարի, այսինքն՝ ագրոքարտին փոխանցված 200 միավոր:

Բնապահպանության եւ գյուղատնտեսության նախարար Լեւան Դավիթաշվիլու մեկնաբանմամբ, 0,25 հա-ից մինչեւ 1,25 հա հողամասի սեփականատերը հնարավորություն կունենա քարտին փոխանցված միավորներն օգտագործել գյուղատնտեսական ապրանք գնելու համար:

1,25 հա-ից մինչեւ 10 եւ ավելի հա մակերես ունեցող գյուղատնտեսական նշանակության հողամասի սեփականատերերը քարտին փոխանցված միավորները կկարողանան կիրառել ինչպես գյուղատնտեսական ապրանք, այնպես էլ՝ ագրոտեխնիկական աշխատանքների սպասարկում գնելու համար:

Նախագծի շրջանակներում, 10 հեկտարից ոչ ավելի հողամասերի համար սուբսիդիան կազմում է առավելագույնը 2000 լարի: Ծրագրից կօգտվի 200 000 ֆերմեր: Ծրագրի բյուջեն կազմում է 37 000 000 լարի, եւ այն կմեկնարկի 2020 թվականի մայիսի 20-ից:

42 ՀԱԶԱՐ ՖԵՐՄԵՐ ԱՋԱՏՎՈՒՄ Է ՈՌՈԳՄԱՆ ՋՐԱՀԱՐԿԻՑ

Ներկայացնելով կառավարության հակաճգնաժամային ծրագիրը՝ Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան հայտարարեց, որ երկրում գործող շուրջ 42 հազար ֆերմերներ լիովին ազատվում են ջրամատակարարման վճարից, այսինքն՝ ֆերմերները 2020 թվականի ընթացքում ոռոգման ջուրը կստանան անվճար:

Բացի այդ, վարչապետի հայտարարությամբ, այն ֆերմերները, որոնք կցանկանան գնել տեխնիկա, պետությունը դրամաշնորհի տեսքով կվճարի գնի 50 տոկոսը:

- Յուրաքանչյուր ֆերմեր, ում անհրաժեշտ կլինի գնել տեխնիկա, ստեղծել ջերմոցային տնտեսություն կամ ոռոգման համակարգ, պետությունը կհատկացնի այդ ծախսերի 50 տոկոսը, դա կլինի դրամաշնորհի տեսքով: Ֆերմերներն այս ամենի վերաբերյալ կարող են մայիսի 20-ից դիմել գյուղատնտեսության համապատասխան ստորաբաժանումներին, եւ դա շատ կարեւոր է, քանի որ այժմ ընթանում են գարնանային աշխատանքներ,- հայտարարեց Գիորգի Գախարիան:

ԳՐԱՆՑՎԱԾ ՄԵԿ ՀԵԿՏԱՐԻ ՀԱՇՎՈՎ 200 ԼԱՐԻԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ, ՈՐԸ ԿԱՐԵԼԻ Է ԾԱԽՍԵԼ ՄԻԱՅՆ ՀԱՏՈՒԿ ԽԱՆՈՒԹԵՐՈՒՄ

Մայիսի 12-ի գյուղատնտեսության հակաճգնաժամային ծրագրի շնորհանդեսին վարչապետ Գիորգի Գախարիան նշեց, որ գրանցված հողամասեր ունեցող բոլոր ֆերմերները մեկ հեկտար տարածքի համար պետության կողմից կստանա 200 լարիանոց օգնություն:

- Սա նշանակում է, որ միջին մակարդակի տնտեսությունները, որոնք ասենք ունեն 10 հա տարածք եւ մշակում են, պետությունից կստանան 2000 լարի օգնություն:

Դա, իհարկե, բաշխվելու է համամասնորեն այն ֆերմերների վրա, ովքեր ունեն համեմատաբար ավելի քիչ հողատարածքներ,- ասաց վարչապետն ու հավելեց, որ Վրաստանում ֆերմերները յուրաքանչյուր գրանցված հետկարի դիմաց պետությունից ստացած 200 լարիի օգնությունը կարող են ծախսել միայն մասնագիտացված գյուղատնտեսական խանութներում:

ՀԵԿՏԱՐԻ ՀԱՇՎՈՎ 150 ԼԻՏՐ ԴԻԶԵԼ՝ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԳՆԻՑ ՄԵԿ ԼԱՐԻՈՎ ԷԺԱՆ

Հակաճգնաժամային ծրագրի շնորհանդեսին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան խոսեց նաեւ ֆերմերներին վառելանյութով ապահովելու հարցի շուրջ՝ հայտարարելով, որ բոլոր ֆերմերները մեկ հեկտար տարածքի համար կստանան 150 լիտր դիզելային վառելիք, որը կլինի երաշխավորված շուկայական գնից մեկ լարիով ցածր: Ընդհանուր առմամբ, խոսելով վառելանյութի թեմայի շուրջ՝ կառավարության ղեկավարը նշեց, որ գյուղատնտեսական գործունեության համար վառելիքի գինը ծայրահեղ կարեւոր է, եւ կառավարությունն աշխատում է այս խնդիրը լուծելու ուղղությամբ, ոչ միայն ընթացիկ տարում, այլեւ հետագա տարիների համար:

- Ընդհանրապես, գյուղատնտեսական գործունեության համար վառելիքի գինն անչափ կարեւոր է, եւ մենք աշխատում ենք այս խնդիրը լուծելու շուրջ ոչ միայն ճգնաժամի ընթացքում, այս տարի, այլեւ հաջորդ տարիների համար, եւ ես կարող եմ հաստատապես ասել, որ ագրոդիզելի գինը կլինի զգալի էժան, քան դիզելի շուկայական գինը,- ընդգծեց Գիորգի Գախարիան:

էջը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ